

ՀԱՎՈՐ ՕՇԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 20-ՐԴ
ԴԱՐԱՍԿՁԲԻՆ

Հակոբ Օշականը՝ այն ժամանակ դեռ Բյուֆեյայանը, իր քննադատական գործունեությունը սկսել է 1910-ական թվականներին արևմտահայ մամուլի էջերում լույս տեսած հոդվածներով: Քննադատական գործունեության առաջին քայլերից արդեն նա ուներ որոշակի սկզբունքներ, մոտեցումներ, արժեքային կոտ համակարգ, որին հավատարիմ է մնացել մինչև կյանքի վերջը: Առաջին հոդվածներում արդեն բացահայտվում է Օշականի անհանդուրժողականությունը միջակությունների հանդեպ, ընդունված համընդհանուր կարծիքի հետ կոտորեն համաձայնվելու փոխարեն ինքնուրույն վերլուծելու ձգտումը, նորի, համարձակի որոնումն ու դրվատումը, գրականության շահի անվերապահ չափանիշը: Նրա հայացքների ձևավորման հարցում մեծ դեր է խաղացել ժամանակաշրջանի գրական, գեղագիտական մթնոլորտը, և Օշականի քննադատական հայացքների ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է նկատի առնել ժամանակաշրջանն իր առաջադրած խնդիրներով: Ավելին, Օշականի քննադատական հայեցակետը պիտի դիտարկել և արժևորել 20-րդ դարասկզբի գրական-գեղագիտական մթնոլորտի համատեքստում:

20-րդ դարասկզբի թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ իրականության մեջ՝ հասարակական, գրական, գեղագիտական ոլորտներում, առանցքային դեր էր կատարում ազգային ոգու, ազգային ինքնության որոնման, ժողովրդի բարոյական գիտակցության կազմակերպման, նրա հոգևոր վերածննդի և ինքնահաստատման գաղափարը: Ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը նոր ժամանակներում ձգտելու էր վերագտնել իր ոգու ինքնությունը, ստեղծել օտար ազդեցություններից գերծ, ինքնուրույն ազգային մշակույթ՝ քաղաքակիրթ ժողովուրդների ընտանիքում իր հաստատուն տեղն ունենալու համար: Արևմտահայ հատվածում այս մտահոգության ծնունդ էր 1900 թվականին Արտաշես Հարությունյանի կազմակերպած բանավեճը, որ գրականագիտության մեջ հայտնի է «վաղվան գրականություն» անունով: Բանավեճի մասնակիցները (Ա. Հարությունյան, Ռ. Ջարդարյան, Գ. Անդրեասյան, Առանձար, Ռ. Որբերյան, Գ. Շահինյան, Ռ. Պերպերյան, Հ. Գազանճյան, Ա. Ալադյանյան և ուրիշներ), չնայած տարակարծիք էին «վաղվան գրականության» բնույթի, ուղղությունների, լեզվի և այլ հարցերում, համակարծիք էին ամենաէական հարցում. հայ գրականության զարգացման համար անհրաժեշտ են փո-

փոխություններ, հատկապես ինքնաճանաչման ու ինքնակատարելագործման ճգնաժամ: Այդ մտահոգությունն ավելի խորացավ, հիմնավորվեց և գրական շարժման ձև ստացավ 1908 թվականից հետո: Երիտթուրքերի ապստամբության հռչակած ազատության, եղբայրության և հավասարության կոչերը բուռն ոգևորություն էին առաջ բերել և մեծ հույս էին ներշնչել արևմտահայությանը: Մամուլի ազատությունը հնարավորություն էր տվել խոսել մինչ այդ արգելված թեմաների շուրջ: Գրական մթնոլորտը, անգամ գրական քննադատությունը նոր շունչ էր առել: Ինքնաքննության մղումը գրական շարժման խորհրդանիշ դարձավ թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Արևելյան Հայաստանում: 1914 թվականին Պոլսում ասպարեզ եկան «Նավասարդ» տարեգիրքը ու «Մեհյան» հանդեսը, որոնց հիմնադիրները մշակութային հեղափոխության մեջ էին տեսնում հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր անկախության, այլև ֆիզիկական գոյության հեռանկարը: Միևնույն նպատակին հասնելու համար այս երկու պարբերականներն ընտրել էին տարբեր ուղիներ: Գրականության պատմաբանները «Նավասարդ»-ը կապում են, այսպես կոչված, «հեթանոսական» շարժման հետ, որի գաղափարական ելակետը հոգևոր վերածննդի միջոցով ազգային և մշակութային ինքնահաստատման ու զարգացման փորձն էր: «Մեհյան»-ի հիմնադիրները՝ Կոստան Զարյանը, Հակոբ Զյուժենյանը (Օշական), Գեղամ Բարսեղյանը, Վարուժանը, աղաջարկում էին ընտրել արժեքների վերագնահատման և համաշխարհային չափանիշներին մոտենալու ուղին: Այս մասին տարիներ անց Թաշյանի հետ իր գրույցում Օշականն պսել է. «Երբ կը հիմնեինք այս հանդեսը, մեր գրականությունը՝ չեմ ըսեր սպառնալից, այլ ինքնակրկնումս նշաններ կը հայտներ: Վեց տարվան մամուլի ազատութիւն մը աճեցուցած էր մեր բառական զգայարանքները և գրողները, շատոնց պարպված՝ բառերէն և քաղաքականութենէն, ատենը չունեին ինքզինքնին նորոգելու: Ատկէ՝ անծածկելի ծանձրոյթ մը, ամենէն առաջ գրողները իրենց դեմ և ընթերցողը՝ ամենուն դէմ: «Մեհյանը» այդ ծանձրոյթը փարատելու, քիչ մը նոր հոսանք, քիչ մը գաղափար, «պոտ մը խեմբություն» ու շատ մը Արևմուտք առաջադրած էր փոխադրել մեր գրականության մեջ: ...Ըսի, թե անկկա ուղղակի բխումն էր իր շրջանին, բայց հակազդեցության բխում մը»¹:

Արժեքների վերագնահատման անհրաժեշտությունը հաստատել է նաև Արտաշես Հարությունյանն իր «Գրական նոր շարժումը» հոդվածում. «Կարելի է արդարև ըսել, թե ամեն անոնք, որ գրականության ճշմարիտ սիրողներ ու հասկացողներ են, նորության պետքը կը հաստատեն մեր մեջ: Նույնիսկ մենք մենեմ ծանձրանալ սկսանք»²:

Նույն 1914 թվականի գարնանը Թիֆլիսում Վահան Տերյանը հանդես է եկել «Հայ գրականության գալիք օրը» զեկուցմամբ, ուր հաստատել է պահի լրջությունը և արժեքների վերագնահատության անհրաժեշտու-

յունը. «Արեւմն մեր գրականությունը և հասարակական միտքը կատարել է մի շրջանառություն և այսօր կրիզիսի ժամն ենք ապրում մենք: ...Այստեղ արդեն անհնար է դանդաղությունը, մահաբեր է ծուլությունն ու ինքնամփռի ու սնապարծ գոհունակությունը: ...Վերագնահատությունները կարևոր են և անհրաժեշտ մանավանդ մի այնպիսի շրջանում, որպիսին մերն է, և պետք է վերագնահատվեն ոչ միայն առանձին հեղինակներն ու գործիչները, ... այլ առավելապես հասարակական մտքի խռոչը հոսանքները, խռոչը հատվածների աշխարհայացքները»³:

Բոլորն էին գիտակցում անկեղծ ինքնաճանաչման ու ինքնակատարելագործման հրատապությունը: Անհրաժեշտ էր գործով ապացուցել նոր հայացքների կարևորությունը, իսկ դրա համար պահանջվում էր հանդուգն փնտրտում, մեծ աշխատանք և առաջին հերթին հավատք ու մեծ սեր արվեստի հանդեպ: Ժամանակի պահանջ դարձած արժեքների վերագնահատության նպատակով Հակոբ Օշականը «Մեհյան»-ի էջերում տպագրել է «Հարթենք» խորագրով հոդվածաշարը, որի առաջաբանում ասում է. «Սկսելով շարքը այս յօդվածներում, մենք նպատակ ունինք մեր գրականության վրայ, զանազան պարագաներու օգնութեամբ, իրենց սնամեջ քարծրութիւնները կտրցնող միջակութիւնները հաւասարութեան կանչելու: ...Անհրաժեշտ ենք պիտի դնենք իրենց արժանի պատվանդաններում վրայ: Անարժաններում պիտի պռռանք մեր արհամարհանքը»⁴:

Այս տրամադրությամբ Օշականը քննել կամ «հարթել» է Հ. Նազարյանցի, Լևոն Շանթի ու Շիրվանզադեի, Երեմյանի ու Փափագյանի, Իստրայի ու Վահան Թեքեյանի ստեղծագործությունը: Ամփստելի է, որ երիտասարդ քննադատի գնահատականները խիստ են, երբեմն ծայրահեղ, սակայն միշտ պատճառաբանված ու անկեղծ: Չենք կարող ասել, թե Օշականի կարծիքը ոչ օբյեկտիվ վերլուծության արդյունք է՝ պայմանավորված նորը ստեղծելու համար հինը իսպառ կործանելու մղումով: Ավելին, տարիներ անց «Համապատկեր»-ի էջերում նշված հեղինակների մասին Օշականի կարծիքը գրեթե չի փոխվել: Մա ապացուցում է, որ երիտասարդ քննադատի կարծիքը հիմնավոր է եղել և դարձել է համոզունք: Օշականը հայտնել ու մեկնաբանել է իր սեփական կարծիքը՝ առանց պարտադրելու: Միաժամանակ նրա խոսքը համեմված է մերթ մեղմ հումորով, մերթ սուր ծաղրով, ինչը առանձնահատուկ գրավչություն է հաղորդել հոդվածաշարին և Օշականի քննադատական ոճը նախանշել:

Քննադատ Օշականը մշտապես առաջնորդվել է «Մեհյան»-ի գեղագիտական հանգանակի հիմնադրույթներով, որոնք դարձյալ համագային բնույթ ունեին: Դրանք են՝ հայ հոգու պաշտամունք և արտահայտություն, ինքնուրույնություն և անձնականություն ձևի մեջ, կենսամորոգ պատվաստումով հայ լեզվի մշակում, զուտ գրականությունը հեռու պահել քաղաքականությունից և լրագրությունից: Հայ հոգու հայտնաբերման պահանջը

բխում էր ժամանակի համազգային շարժման ընդհանուր ոգուց և հանգում ազգի հոգևոր անկախության գաղափարին: Հանգանակի հեղինակները համոզված էին, թե ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդն ունի իր ազգային նկարագրի անկրկնելի գծերը, որոնք դարերի ընթացքում կրել են ձևափոխություններ, բայց հավատարիմ են մնացել իրենց հարազատ տարերքին: Գտնում էին, որ առանց ազգային ոգու չի կարող լինել ազգային արվեստ, և հայ հոգու գեղարվեստական հայտնությունը «էական պարտավորությունն է ամեն հայ արվեստագետին», որովհետև «ամեն ճշմարիտ արվեստագետ իր ցեղին հոգին միայն կարտահայտե»⁵: Այս մասին Կոստան Ջալյանը գրել է. «Մենք կը խորհինք որ ամեն ազգ, ինչպես և ամեն անձնավորություն պարտ է պարզել այն դերը զոր խաղացած է եւ պիտի խաղայ՝ ընդհանուր տիեզերական կեանքին մեջ: Ամեն ազգ պարտ է երեսն հանել իր բազմապիսի հոգեկան հարստութեանց հանդուգն երազները. պարտ է բացատրել իր մտային ապրելակերպը եւ ստեղծել իր եսին յատուկ խորհուրդը աշխարհային ընդհանուր խորհրդագործութեան մեջ»⁶:

Վերոհիշյալ իր գեկույցում նույն միտքն է արտահայտել նաև Վահան Տերյանը. «Մեր մոտավոր նպատակն է կուլտուրական մի ժողովուրդ լինել, այսինքն զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ խոսքով արտահայտել մեզ կյանքում, այսինքն մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբր խորթ զավակ, կամ ծուլ ու խավար ստրուկ, ծուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին, պահելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գույները: Այլ խոսքով՝ ունենալ մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հանուր մարդկային ստեղծագործության մեջ»⁷:

Ձևի «ինքնուրույնության և անձնականության» պահանջի հիմքում այն ելակետն էր, որ կա ազգային անկրկնելի ոճ ու մտածողություն, և այդ ոլորտում յուրաքանչյուր արվեստագետ հաստատում է սեփական ստեղծագործական ես-ը: Իսկական արվեստում այս երկու հայտանիշները (ընդհանուրը՝ ազգայինը, համամարդկայինը, և անձնականը) հանդես են գալիս անբալկելի միասնությամբ. «Մեր հոգին, որ Հայ Հոգին իսկ պիտի ըլլա, պիտի ընդանցնի այն բոլոր ձևերուն մեջեմ, զորս մենե յուրաքանչյուրին զգայականությունն ու ներքին կշռույթը կը թելադրեն: Կը նախընտրենք արտահայտության հարազատ բոլոր ձևերը՝ որ կրած է Հայ Հոգին մեր տոհմային արվեստի ու գրականության մինչաշխմյան երևույթներուն մեջ. բայց կը հայտարարենք, բայց կը պահանջենք անկախություն արտահայտության ամեն ձևերու, որովհետև կը հավատանք թե մինչև որ չլլայ ինքնուրույնություն և անձնականություն ձևերու մեջ՝ չենք ունենար ինքնատիպություն, չենք ունենար ստեղծագործական նորանոր հարստություններ»:

Հայ լեզվի՝ «կենսաանորոգ պատվաստումով» մշակման գործում հանդեսը պահանջում էր մաքրել հայոց լեզուն օտարաբանից՝ բառերից և հարստացնել՝ որդեգրելով գրաբարյան, բարբառային հարազատ ու հայեցի բառեր ու դարձվածքներ՝ առանց մեղանչելու լեզվի ներդաշնակության օրենքների դեմ։ Լեզվի դերը կարևորվում էր, որովհետև գրականության մեջ ազգային ձևի հիմնական կրողը լեզուն է։ Արևմտահայ գրական լեզվի վերանորոգության շարժումը սկսվել էր դեռևս 80-ական թվականներին։ Մակայն «Մեհյան»ի հիմնադիրները խնդրին նոր տեսանկյունից էին մոտենում. պահանջում էին «հիմնել լեզվի գեղեցկագիտություն մը՝ նոր գիծերու, նոր գույներու, նոր շեշտերու յավելումով»⁹, լեզվաշինարարությունը դիտարկելով գեղեցիկի սրբնման ընդհանուր համակարգի մեջ։

«Մեհյանի» հանգանակի վերջին դրույթը քննադատության ու գրականագիտության մեջ հակասական կարծիքների տեղիք է տվել։ Ոմանք այստեղ տեսել են փախուստ իրականությունից, իսկ ոմանք՝ «արվեստն արվեստի համար» տեսության երանգ։ Այդ հարցի առիթով Ս. Մարինյանը, արվեստի բացարձակ անկախության վերաբերյալ հայ տեսաբանների հայացքները կապելով համաեվրոպական գեղագիտական որոնումների հետ, եզրակացրել է. «20-րդ դարի հայ արվեստագետ սերունդը արվեստի փիլիսոփայական խորհուրդը քննում է պատմական քեկման մի այլ հանգամանքի վրա։ Դա ազգի պահպանության և մարդկության ապագա համաշխարհային համագործակցության մեջ հայկական ինքնության հաստատման երազանքն էր»¹⁰։

«Մեհյանը» ձևակերպել է մի նշանաբան, որ բնորոշ էր 20-րդ դարի սկզբի արևմտահայ հոգևոր շարժման համար առհասարակ. «Ապրիլ այն հոգեկան աղքատության մեջ, ինչպես մենք կ'ապրինք, կը նշանակե ոճրագործել մեզի դեմ և տիեզերական խորհուրդին դեմ։ Ժողովուրդ մը, որ բարոյապես չի ներգործվիր, նոր արժեքներ չի ստեղծեր, դատապարտված է եթե ոչ մեռնելու՝ գոնե ապրելու ամոքալի, դիակի կյանք մը»¹¹։

Ժողովրդի ազգային ինքնությունը պահպանելու և զորացնելու միակ ճանապարհը, ինչպես համոզված էր «Մեհյանը», ակտիվ կենսագործունեության, ստեղծելու մեջ է։ Արդեն պարզ էր, որ քաղաքական անկախությունը դեռևս անհրաժեշտ էր երազանք էր, մնում էր առաջին պլան մղել հոգևոր վերածնության գաղափարը, աշխարհի առջև ազգի ինտելեկտուալ լիարժեքության հաստատումը՝ իբրև գոյության իրավունք։ «Ստեղծենք, ապրելու համար տեսականութեան մէջ. ստեղծենք, հոն, այդ տեսականութեան մէջ, մեր ցեղին նոր շեշտերը ատեցնելու համար տիեզերական մեծ համերգութեան վրայ»¹²։

Կոստան Զարյանը գրել է. «Մենք կը խորհինք, որ արուեստը եւ ազատ գրականութիւնը, հոյակապ եւ յանդուգն փնտրտումներուն միակ

ճանքան է. որ ազգ մը միայն արուեստով կրնայ բարձրանալ, միայն արուեստով կրնայ իր տեղը ունենալ տեսականութեան մէջ»¹³:

«Որովհետեւ կյանք նշանակում է ստեղծագործություն – ուր չկա ստեղծագործություն, չկա և կյանք»¹⁴, – ասել է Տերյանը վերը նշված իր գեկույցում:

Ազգային ինքնորոշման ու ինքնահաստատման կարևորության տեսանկյունից «Մեհյանի» էջերում Օշականն առաջ է քաշել «Հայաստանեայց գրականության» գաղափարը: Մեհենականների և մամավանդ Օշականի համոզմամբ ազգային ինքնորոշման գերագույն կերպը գրականությունն է: Հայ հոգին անփոփոխ էություն է, ժամանակների և հանգամանքների բերումով կարող են փոխվել նրա դրսևորման ձևերը, բայց ինքը մնում է անկախ ու հավիտենական: «Հայաստանեայց գրականությունը» հայ հոգու այդ բացարձակ էության արտահայտությունն է: Հայ հոգին մեկ և նույնն է՝ անկախ տարածքային, բարբառային և այլ հանգամանքներով պայմանավորված տարբերություններից: Ուրեմն և մեկ է հայ գրականությունը: «Ատենը եկած է, մենք կը կարծենք, մէկդի նետելու մեր գրականութեան մէջ մուտք ունեցող այն տոգույն, անիմատ ու պապուկ բացատրությունները որոնք պահ մը յոխորտօրեն պտտեցան հրապարակին վրայ: Մեր գրականութիւնը մեկ է: Ան կու գայ վարեն, հեռաւոր շրջաններէն: Բարբառներու այլազանութեանը տակ նոյն արիւնն է որ կը քալէ, ապրեցնելով ցեղին մէջ, դարերու բացվածքներուն վրայ ցուացիկ մեծութիւններ: ...Բոլոր Հայերուն ժառանգութիւնն է ան: ...Հայաստանեայց գրականութիւն յոյացումը (concept) կը տարածուի հաւասարապէս հայ ցեղին ամեն մասնիկներուն վրայ: ...Ան լայն է սեղմուիլ կարենալու համար գրականութեան երկու հատուածներուն այլամերձ նեղմտութեանը մէջ»¹⁵:

Քննադատի համոզմամբ ազգի հոգևոր ամբողջ պատենցիայի գործադրության դեպքում մենք կունենանք ներկայանալի գրականություն: Այդ հավատը ներշնչում են մեր բանահյուսությունը, միջնադարյան տաղերգությունն ու հոգևոր քնարերգությունը: Եկել է պահը, որ ստեղծվեն ու զմահատվեն նոր գրական-ազգային արժեքներ: Օշականի «Հայաստանեայց գրականության» գաղափարը համընկնում է Տերյանի «հոգևոր Հայաստան» գաղափարի հետ: Ահա Տերյանը գրել է. «Հայության հավատքում» կամ «Հայության կազմակերպում» գաղափարական իմաստով, ահա ինչ են հասկանում ես «հոգևոր Հայաստան» ասելով: Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապէս կազմակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուգեինք հավատալ: ...Այդ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահափոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը»¹⁶:

Ինչպես տեսնում ենք, թե՛ Օշականը, թե՛ Վահան Տերյանը գրական վերածնության ծրագրերին տալիս էին համազգային նշանակություն: Օշականի հոդվածում ուղղակի ընդգծվում է, որ այդ գործի հաջող իրագործման համար պետք է միավորել երկու հատվածների հայ մտավորականության ջանքերը, օգտագործել մեծ անհատականությունների սերն ու հավատը այս նվիրական գործի հանդեպ:

Հայ գրականությունը յուրօրինակ հրավեր է բոլոր հայ գրողների համար: Օշականը գրում է. «Մենք կ' ըսենք ձեզի. – հատուածեալ մեր գոյութիւնը ամբողջութեան տանելու համար կ' ըսպասենք մեր Տանդէին: ...Մեր հրավերը ընդհանուր է: Ան կուղղվի հավասար պաղատանքով թե Պոլսին, թե Մայր երկրին, թե Կովկասին, թե Ատրպատականին... Հայաստանեայց Գրականութիւնը մեր տապաւակն է: Պահենք զայն ամուր...»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, 20-րդ դարասկզբի հայ հատվածյալ մտավորականության ներկայացուցիչներին մտահոգում էին նույն խնդիրները: Անցել են տասնամյակներ, բայց շատ բան չի փոխվել: Այսօր՝ 21-րդ դարասկզբին էլ թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի մտավորականությունն ու մշակույթի գործիչները համախմբվում են և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսով փորձում պատասխան գտնել հայ գրականության և առհասարակ մշակույթի առջև ծառացած հարցադրումներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մայրիներու շուքին տակ (Գրական գրույց Օշականի հետ), 100-ամյակի հրատարակություն, քիվ 2; Բեյրութ, 1983թ., էջ 94-95:
2. «Մեհյան», քիվ 5; Պոլիս, 1914թ.:
3. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2; Երևան, 1961թ., էջ 248-251:
4. «Մեհյան», քիվ 1; Պոլիս, 1914թ., էջ 9:
5. Նույն տեղը, էջ 1-2:
6. «Մեհյան», քիվ 7; Պոլիս, 1914թ., էջ 98:
7. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2; Երևան, 1961թ., էջ 275-276:
8. «Մեհյան», քիվ 1; Պոլիս, 1914թ., էջ 2:
9. Նույն տեղը:
10. Մարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը; Երևան, 1979թ., էջ 319:
11. «Մեհյան», քիվ 5; Պոլիս, 1914թ.:
12. «Մեհյան», քիվ 1; Պոլիս, 1914թ., էջ 3:
13. «Մեհյան», քիվ 7; Պոլիս, 1914թ., էջ 99:
14. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2; Երևան, 1961թ., էջ 276:
15. «Մեհյան», քիվ 3; Պոլիս, 1914թ., էջ 38:
16. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 314:
17. «Մեհյան», քիվ 3; Պոլիս, 1914թ., էջ 40: